ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԱՎԱԳՅԱՆ

# ԿՈՂԲԻ Ջ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ

| N | Միջոցառման բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | <<Գիտելիքի օր>> Բարև, սեպտեմբեր (միջոցառումների սցենարը կցվում է) | 01.09.2022թ, | Մ. Հարությունյան | |
| 2 | Անկախության օր՝ միջոցառումներ նվիրված ՀՀ Անկախությանը՝ մասնակցությամբ 1-12-րդ դասարանների սովորողների, ծնողների | 21.09.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 3 | Շնորհավո՛ր տոնդ, ուսուցի՛չ Աշխարհիդի օգնությամբ բացիկներով շնորհավորել ուսուցիչներին | 05.10.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 4 | Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություններ | 06.10.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 5 | <<Ոսկե աշուն>> համադպրոցական արշավ | 29.10.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 6 | <<Ա>> տառի շնորհանդես 1-ին դասարանում | 04.11.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 7 | Մաթեմատիկական մրցույթ 7-րդ դասարանցիների միջև | 30.11.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 8 | Դասասենյակների ձևավորում մրցույթ /կատարել եռամսյակը մեկ/ | 30.11.2022թ. | Մ. Հարությունյան | |
| 9 | Մասնակցություն <<Եվրատեսիլ 2022>> երգի մրցույթին | 10.12.2022թ | Մ. Հարությունյան | |
| 10 | Մեղու - հայերենը բոլորի համար Մրցույթին աշակերտների մասնակցության ապահովում | | Մ. Հարությունյան | |
| 11 | Ամանորյա միջոցառումներ 1-12-րդ դասարանցիների մասնակցությամբ | 20—26.12.2022թ | Մ. Հարությունյան | |
| 12 | Շնորհավոր հայկական բանակի օր | 28.01.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 13 | Սպորտային մրցույթ 5-րդ դասարանցիների միջև | 30.01.2023թ. | Մ. Հարությունյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Հանդիպում զորամասի ներկայացուցչի հետ Զրույցներ, զեկույցներ | 01.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 15 | Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառում 5-12-րդ դասարանցիների համար | 04.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 16 | Բարության օր<br>Փոքր նվերներ մատուցել պատահական մարդկանց /գյուղում/ | 16.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 17 | <<Աշխարհագրություն >> առարկայից մրցույթ 7-րդ դասարանցիների միջև | 16.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 18 | Հայաստանում գիր նվիրելու օր<br>Գիրք նվիրել գրադարանին | 20.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 19 | Մայրենիի օրվան նվիրված միջոցառում | 21.02.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 20 | <<Դռները բացե՛ք զարուն է գալիս>><br>(Երաժշտական միջոցառում 5-րդ դասարանում) | 01.03.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 21 | Կանանց միջազգային օր /շնորհավորել բոլոր ուսուցիչներին և աղջիկներին/ | 10.03.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 22 | <<Կենգուրու 2023>><br>Ապահովել աշակերտների և ծնողական խորհրդի անդամների մասնակցությունը | 16.03.2023թ.<br>17.03.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 23 | Ծաղկազարդի միջոցառմանը մասնակցել եկեղեցում բարձր դասարանցիների հետ | 02.04.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 24 | Մայրության և գեղեցկության օրը շնորհավորանքներ | 07.04.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 25 | Սուրբ Զատիկ<br>Տոնական սեղանների ձևավորում 1-12-րդ դասարանցիների և ծնողների ուժերով | 09.04.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 26 | Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության օր, այցելություն թանգարաններ, հուշարձաններ /մաքրել հուշարձանի շրջակայքը/ | ապրիլ | Մ. Հարությունյան | |
| 27 | Համերգային ծրագիր՝ նվիրված հայրենիքին, քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակին և եղեռնին | 24.04.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 28 | Հրաժեշտ այբբենարանին | ապրիլ | Մ. Հարությունյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 29 | Պար-մրցույթ դասարանների միջև | 29.04.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 30 | Շաբաթօրյակ | ապրիլ | Մ. Հարությունյան | |
| 31 | Հաղթանակի օր (այցելել Մեծ Հայրենական պատերազմում զոհված կողբեցիների հուշարձան) | 09.05.2023թ. | Մ. Հարությունյան | |
| 32 | Ընտանիքի միջազգային օր /սպորտային մրցույթ տարրական դասարանների ընտանիքների միջև/ | մայիս | Մ. Հարությունյան | |
| 33 | Վերջին զանգ | մայիս | Մ. Հարությունյան | |
| 34 | Հանդիպումներ սովորողների ծնողների հետ | պարբերաբար | Մ. Հարությունյան | |
| 35 | <<Էթիկայի կանոններ և քաղաքակիրթ վարվելաձներ>> թեմայով քննարկումներ | պարբերաբար | Մ. Հարությունյան | |
| 36 | Կինոդիտումներ, քննարկումներ | պարբերաբար | Մ. Հարությունյան | |
| 37 | Բացահայտել դպրոցի սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին, աջակցել նրանց | պարբերաբար | Մ. Հարությունյան | |
| 38 | Ապահովել աշակերտների մասնակցությունը տարածաշրջանային միջոցառումներին | պարբերաբար | Մ. Հարությունյան | |

# ԿՈՂԲԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

# ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Կկարգավորենք աշակերտների կարգապահությունը
2. Կհետևենք աշակերտների հագուստին: Կարգը խախտելու դեպքում, սահմանափակ զգուշացումներից հետո կկիրառենք պատիժ:
3. Դասղեկների օգնությամբ կանկացնենք մրցույթներ ըստ ֆիզիկական և նյութական կարողությունների:
4. Կստեղծենք խմբակներ՝ ստեղծագործության, կավագործության, նկարչության և այլն: Որոշ ժամանակ անց կկազմակերպենք ցուցահանդես-վաճառք, որից ստացած եկամուտը կօգտագործենք էքսկուրսիաների կամ այլ միջոցառումների համար:
5. Կապահովենք երկու դպրոցների աշակերտական խորհուրդների համատեղ գործունեությունը:
6. Աշակերտների օգնությամբ կկազմակերպենք շաբաթօրյակներ՝ նպաստելով դպրոցի շրջակայքի մաքրությանը:
7. Աշակերտների ջանքերով, կենսաբանության ուսուցիչների օգնությամբ կարող ենք հավաքել տնկիներ, կատարել ծառատունկ՝ դպրոցի շրջակայքը գեղեցկացնելու նպատակով:
8. Դպրոցի բակի զարդարում ծաղիկներով և մշտադալար թփերով:
9. Ինչպես նաև կստեղծենք <<Տաղանդավոր աշակերտ>> անկյունը, որտեղ կներկայացվեն մեր դպրոցի տաղանդավոր աշակերտների ստեղծագործությունները (բանաստեղծություն, նկարչություն, ձեռքի տարբեր աշխատանքներ): Կստեղծենք նաև <<Հիշարժան օրեր>> անկյունը, որտեղ կնշեն այնպիսի տոներն ու հիշարժան օրերը, որոնց մասին աշակերտները պիտի տեղեկացված լինեն և յուրաքանչյուրի համար կստեղծենք համապատասխան պաստառ:
10. Դպրոցական միջոցառումների հաճախականության պահում, որպեսզի աշակերտների առօրյան դառնա ավելի հետաքրքիր:
11. Կկազմակերպենք ներդպրոցական սպորտային սպորտային միջոցառումներ:

12. Կկազմակերպենք նաև ինտելեկտուալ խաղեր:
13. Հաճախ կիրականացնենք մրցույթներ զուգահեռ դասարանների միջև՝ դասղեկների միջամտությամբ:
14. Կստեղծենք աշակերտների իրավունքների և պարտականությունների ծանոթացում
15. Կազմակերպիչների օգնությամբ կշարունակենք <<Բանավեճ>> ակումբի գործունեությունը:
16. Ինչպես նաև կստեղծենք ցուցակներ լավ և վատ վարքի համար, որոնց համար կկիրառենք նախազգուշացում, զգուշացում, պատիժ:
17. Արդեն վերանորոգված դասասենյակների ձևավորում (յուրաքանչյուր դասասենյակի համար մեկ թեմա), ինչպես նաև սենյակային բույսերի աճեցում և խնամում:
18. Դպրոցի միջանցքների զարդարում համապատասխան թեմաներով: